ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Փ.Գրիգորյանը, Հայկ Մարիկյանը, Արմեն Ջուլհակյանը, Վանո Հակոբյանը, Արմեն Դավթյանը, Լիլիա Հարությունյանը, Վարսիկ Ասրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արսեն Հարությունյան, Լևոն Քալանթարյան, Ավետիկ Սարգսյան, Էլմիրա Ռևազյան, Գայանե Ղալաչյան, Արսեն Ավագյան, Մարիամ Մանուկյան, Արման Սուքիասյան, Արարատ Չերքեզյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Էլմիրա Ռևազյանը

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 1 հարց:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ- 14 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 86-Ա)**

ԼՍԵՑԻՆ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 24-Ա, 11 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 34-Ա ԵՎ 05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 68-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***(ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱՋՅԱՆ)***

Հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 689-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Բնական գազի անխափան մատակարարման, գազահամակարգերի սպասարման և անվտանգ շահագործման նպատակով՝ տալ համաձայնություն գույքի անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերում 2024 թվականին սուբվենցիոն ծրագրով կառուցված և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ներքոհիշյալ վկայականներում նշված գույքերը.

Հ/Հ	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը	Գույքի գտնվելու վայրը և անվանումը	Հողամասի բնութագրերը/ կադաստրային ծածկագիր, մակերեսի չափ՝հա, նպատակային նշանակություն, գործառնական նշանակություն/	Լրացուցիչ տեղեկություններ
1	29042025-06-0033	10.03.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Արմանիս		Գրանցման օբյեկտ է հանդիսանում գազատարը՝ D-57*3.5 մմ L-2184 մ 76*3.5 մմ 796 մ 89*4 մմ 376 մ 108*4 մմ 182 մ 125*4 մմ 156 մ 159*4.5 մմ 130 մ 40 մմ 45 մ N 10032025-06-0051 վկայականի ուղղումը կատարվել է 29.04.2025թ.
2	29042025-06-0030	10.03.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար		Գազատար D=57 մմ L=2160 մ, D=76 մմ L=926 մ, D=89 մմ L=102 մ, D=108 մմ L=331 մ, D=133 մմ L=147 մ, D=159 մմ L=113 մ,
3	11032025-06-0026	11.03.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք.		Առկա է սեփականության իրավունքով Միջին ճնշման գազատարի D=160*9.1 մմ L=11815 մ պոլիէթիլեն խողովակ, D=159*4.5 մմ L=3788 մ պողպատե խողովակ, D=57*3.5 մմ, L=590 մ, D=76*3.5 մմ L=358 մ, D=89*4 մմ L=291 մ, D=108*4 մմ

					L=306 մ, D=159*4.5 մմ L=67 մ,
4	02042025-06-0009	02.04.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Կաթնաղբյուր		Առկա է ցածր ճնշման գազատար 4196 գծամետրով: D=57x3.5 մմ, L=1702մ, D=76 x 3.5 մմ L=658 մ, D=89 x 4 մմ L=128 մ, D=108 x 4 մմ L=529 մ, D=125 x 4 մմ L=311 մ, D=133 x 4.5 մմ L=33մ, D=159 x 4.5 մմ L=835մ,
5	31072025-06-0044	31.07.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Արմանիս, 3-րդ փողոց 1/1	06-007-0722-0021, 0,00065 հա, բնակավայրերի՝ այլ հողեր	Հողամասում առկա է 1.5 քմ ՊԳԿԿ և 0.7 քմ հաշվիչ հանգույց
6	02082025-06-0013	02.08.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Կաթնաղբյուր, 4-րդ փողոց 3/1 հողամաս	06-051-0035-0011, 0,00124 հա, բնակավայրերի՝ այլ հողեր	Հողամասում առկա է 2,8 քմ ՊԳԿԿ և 0.70 քմ հաշվիչ հանգույց
7	09092025-06-0083	27.06.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար, 3-րդ փողոց 25/3 շինություն	06-106-0021-0033, 0,00119 հա, բնակավայրերի՝ այլ հողեր	Հողամասում առկա է 1.5 քմ ՊԳԿԿ և 0.7 քմ հաշվիչ հանգույց 27.06.2025թ. վկայական

2. Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հետ կնքել վերոհիշյալ վկայականներում նշված գույքերի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ իրականացնելով նաև դրանց առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրման, դրանցից բխող բոլոր գործառույթների կազմակերպման և պատշաճ իրականացման գործընթացը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխով սահմանված՝

գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի նկատմամբ առաջադրված պահանջները:

3. Սույն որոշմամբ նշված գույքերն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը կնքել) անորոշ ժամկետով:
4. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 14 մարտի 2025 թվականի N 24-Ա, 11 ապրիլի 2025 թվականի N 34-Ա և 05 օգոստոսի 2025 թվականի N 68-Ա որոշումները:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 14 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 87-Ա)**

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)*

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի 24.10.2025 թվականի ավագանու արտահերթ նիստի ժամանակ Ստեփանավանի երկրապահ կամավորականների միության բաժանմունքի նախագահ Գագիկ Վարդումյանի խնդրանքը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միության Ստեփանավանի տարածքային բաժանմունքին տրամադրել նվիրատվություն 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ- 14 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է **(կցվում է որոշում N 88-Ա)**

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆԸ